

բեան ալ կարօտին՝ իրմէ կրնան ընդունիլ, եւ ըստ այնմ իրենց որդիքը յողարկելու հաճութիւն որ ունենան՝ կանոնաւոր կերպով պետք եղած միջոցներն ու պատրաստութիւնները ձեռք կառնուն :

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ ՄԱՍԵՍՅ ԱՂԱՆԻՒՅՑ :

Մուրատեան վարժարանին ողբալի անցքերուն Յայտարարութիւնը արժանաւոր մտադրութեամբ կարդացող ազգասէր ու արդարասէր անձինք զանազան նամակներով իրենց ցաւակցութիւնը յայտնեցին այն յայտարարութեան հեղինակներուն : Անոնք ալ պարտք կրնամարին անձանց՝ հրապարակաւ մատուցանել հոս այնպիսի ճշմարիտ բարեկամաց իրենց երախտագիտութիւնն ու սրտանց շնորհակալութիւնը :

Միանգամայն անօգուտ չեն կարծեր հրատարակել այս անգամ այն նամակներուն մէկ երկուքին խօսքերը ճաշակի համար, իբրեւ զանձ մտերմութեան եւ մխիթարութեան պահելով քովերին անոնց եւ ուրիշներուն ընդարձակ բնագիրները :

« Կոստանդնուպօլիս, 31 Օգոստ . 1855 .

« ... Յայտարարութիւննիդ կարդացի, յորմէ տեղեկացայ ամենայն եղելոց, ցաւ եւ նողկանք իմացայ եղեալ իրաց : Թշնամիք տանն Մխիթարայ զԱբեմաս քիչ մը հեռացուցին անկից . որով Հերը ներս սողուկելով՝ այսպիսիներ գործել տուաւ . սակայն երբ որ ժամանակը յառաջանայ, եւ ասանկ շփոթութիւններէ տագնապեալ կիրքերն որ խաղաղին, երկորին կողմանք մեկգմեկ քեակոխել պիտի ջանան՝ ինչպէս սկսած են, ի գործս բարեաց յօգուտ ազգին . եւ Նախապատճառն ջարեաց պիտի տեսնայ այն առածին ստուգութիւնը որ Մասեաց Աղանիդ ալ կանատե, որ է « ի ջարեացբարիք երեսան ելլել : » Իմ ալ հաւատաւ առայս եւ, եւ անն արգասիքը . երկու դպրոց եղած ժամանակ, երրորդ մ'ալ անա կելլէ կրկանգնի, նոր ուժով, նոր գաղափարով, դժուարութիւնք խոջընդոտք իրեն ասպարեզ բռնած՝ որոնց վրայէն արիաբար շահատակելով պիտի անցնի : Յարատեւեցէր քաջութեամբ բարեգործութեան ասպարիզիդ մեջ . ժամանակն է ձեզի վարձանատոյց : Անցելոյն յիշատակը միայն ձեզ պետք է քաջալերէ : Ամենայն բարեգործութեան արդիւնքը անմոռաց է : Երբեմն ներկայն ապերախտ է, բայց ապագայն մեծաբարոզ կը հռչակէ : Աս բաղդին վիճակեցաւ առաւել Վ. Հ. Սարգիս : Ինք որ Սամուէլի Մուրատայ մեծագործ բարեարարութեան

նուանը ժողովող, տնկող, ծլեցնող եւ ամեցնողն եղած է, իսկ անունն ալ անոր անուանը հետ պիտի հիւստի, երկորին մէկ համաստեղութիւն պիտի կազմեն : Ո՛վ ինչ կուգէ ըսէ . ներքին պարագաները ինձ փոյր չեն . արտաքին եղած բարիքը եւ անոր գործիք գտնուողներն որ նկատեմ, կը տեսնամ որ աս առիքով՝ Վ. Հ. Սարգիս ապերախտութիւն կրելովն՝ աշխարհիս Բարեբարաց ակումբին մեջ կանցնի . այն հոյակապ շարքը ասով իրեն տեղ կը բանայ, որ ինք ալ հոն անցնի եւ մեջերին բազմի : Հարկաւ հանդերձեալ դարուց պատերուն կրքընած, ստուերաց մեջ դեռ ծածկեալ դափնի մը իր քառաստեան քեւերը բեպետ յամր՝ այլ միշտ կ'ամեցունէ, որ մատաղաստունի բարունակը Հայկայ անոր դայարի շառաւղացը պսակներ ոլորեն ի ցոյց երախտապարտ սրտից խրեանց : Մատուցէր իրեն ուրեմն իմ խոնարհական ողջոյններս, » եւ այլն :

Խոնարհ ծառայ եւ բարեկամ »

« Կ. Պօլիս, 19 Սեպտ . 1855 .

« Մուրատեան վարժարանին անցքերուն Յայտարարութիւնը ծայրէ ծայր կարդալով, ձեր Արժանապատուութեան եւ երկու արգոյապատիւ երիցակցացդ անկեղծ եւ հաստատուն ազգասիրութեան եւ զովելի ջանից բազմաթիւ ապացոյցները տեսայ անոր մեջ : Հաւաստի եմ որ զանի կարդացողներուն ամենն ալ նոյն դատաստանը ըրած են . որով ձեր արդիւնքը անմոռաց շնորհակալութեան իրաւունք ստացած է բոլոր ազգին առջեւ, եւ ներկայ ու ապագայ ձեռնարկութիւններնիդ ալ անտարակոյս քաջալերութիւն նպաստ եւ ձեռնտութիւն պիտի գտնեն միշտ ազգին ողջամիտ եւ կարող մասէն : Արեւելեան նորահաստատ Վարժարանը արդէն ապացոյց մը կրնայ ըլլալ ըսածիս . մեր բարեկամներուն ու ծանօթներուն բով խօսք բացած ատենս՝ միշտ եռանդուն համակրութիւն մը կը տեսնեմ, եւ զանակ ունեցողներուն տուած յորդորանքներս յօժաբամիտ ունկնդրութիւն կը գտնեն, որուն համար շատ ուրախ եմ, » եւ այլն :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԱՍԷԼԵՐԻ :

PARIS. — IMPRIMERIE WALTER, RUE BONAPARTE, 44.